

ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, 33-րդ թաղամաս
հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի
կառուցման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Երևան 2020

ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, 33-րդ թաղամաս
հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

<<Կաէո Մայնինգ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ռ.Կարախանյան

<<Էկո Մենեջմենթ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Ա.Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	5
1.2	Հապավումներ	5
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	6
3.	ԻՆԺԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	17
4.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	18
4.1	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	19
4.2	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԲՅԵԿՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	19
4.3	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԲՅԵԿՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	20
4.4	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.....	21
4.5	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԲԵՌՆԱՄԲԱՐՁ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	22
4.6	ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ	23
4.7	ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ	24
4.8	ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՒՄԸ.....	26
4.9	ՆՅՈՒԹԵՐԻ և ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	28
4.10	ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	30
5.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ.....	32
5.1	ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	32
1.1	Կլիման	33
5.2	ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ	35
5.3	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	37
5.4	ՀՈՂԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	38
5.5	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	38
5.6	ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ.....	38
5.7	ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	40
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	41

7.	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	41
7.1	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	42
8.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	42
8.1	ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	42
8.2	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	42
8.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	43
8.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	43
8.5	ԱՂՄՈՒԿ և ԹՐԹՌՈՒՄ	45
8.6	ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ	45
9.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ.....	46
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	47
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	50
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	25
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	«Կաէռ Մայնինգ» ՍՊԸ
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	Ք.Երևան, Կոմիտաս 1, 182 բն
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ք.Երևան Գյուլբենկյան 30
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան
1.6 Հեռախոս՝	

1.2 Հապավումներ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ՝	պետական ոչ առևտրային կազմակերպություն

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, 33-րդ թաղամաս հասցեում 2,4 և 5 լոտերի տարածքում :

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

Նախատեսվող գործունեության նկարագիր

Հողամասը գտնվում է Երևան քաղաքի, կենտրոն համայնքի N33 վերակառուցվող թաղամասում, կազմված է N 2; 4; և 5 լոտերից:

Սույն էսքիզային նախագիծը մշակվել է հիմք ընդունելով N29102019-01-0189, N01102012-01-1109, N2570066, N2561649, N2563263, N2572463, N2552380, N06092013-01-0231, N18082017-01-0009, N18082017-01-0032, N18082017-01-0062, N15082017-01-0221, N15082017-01-0227, N15082017-01-0212, N15082017-01-0228, N15082017-01-0214, N21032018-01-0005, N24122014-01-0106, N24122014-01-0107 անշարժ գույքի սեփականության վկայականները, 2018թ. տրամադրած նախագծային առաջադրանքները և պատվիրատուի առաջադրանքը:

Հողամասի մակերեսն է 3207քմ, կառուցապատման մակերեսը 2586քմ: Կառույցի ընդհանուր մակերեսն է 29.958 քմ, որից Գրասենյակային, առևտրային տարածքներ - 5459քմ, Բնակարաններ - 13.003քմ, Ավտոկայանատեղ - 5928քմ /144մեքենայի համար/, Ընդհանուր տարածքներ - 5568քմ:

Կառույցը նախատեսվում է 9 և 12 հարկանի, համապատասխանաբար 30 և 45մ բարձրությամբ: Նախատեսվում է 3 ստորգետնյա ավտոկայանատեղ, որը միացված է ընդհանուր թաղամասի ավտոկայանատեղիին: 1-ից 3 հարկը նախատեսված է գրասենյակային տարածքներ և խանութներ: 4-12 հարկերը նախատեսված են բնակարաններ /110հատ/: Հողամասին կից 5 հարկանի գրասենյակային կառույցին նայող հատվածում նախատեսվում են գրասենյակներ:

Լոտ N 2-ում է գտնվում ՀՀ Հուշարձանների ցանկում ներառված,

1800-ականներին կառուցված շենքը /Հանրապետության փ. 46 հասցե/ : Այն իրենից ներկայացնում է հատակագծում Դ-աձև երկհարկանի կառույց: Հանրապետության փողոցահայաց կողմը կառուցված է կանոնավոր, սև գույնի տուֆե միդիս շարվածքով: Մյուս ճակատներն իրականացված են փոքրաչափ, անմշակ տուֆից: Միջհարկային ծածկերն իրականացված են փայտե տարրերից: Տանիքը լանջավոր է, թիթեղյա ծածկույթով: Բակային հատվածում փայտե տարրերից իրականացված են պատշգամբներ և հետագայում ավելացված կառուցվածքներ:

Համաձայն <<ՇԵՄՔ>> ՄՊԸ կողմից կատարված ուսումնասիրության և տեխնիկական վիճակի եզրակացության շենքի ընդհանուր վիճակը գնահատվում է խիստ անբավարար և վթարավտանգ, իսկ վնասվածությունը գնահատվում է 4-րդ աստիճանի:

Հուշարձան շենքի հարևանությամբ կառուցվել է Թուֆենկյան կենտրոնի 7 հարկանի շենքը, որը հուշարձան կառույցին հարում է 2-րդ հարկից սկսվող կոնսոլ հատվածով: Լոտ 2; 4 և 5-ի վրա նախատեսվում է 9-11 հարկանի բազմաֆունկցիոնալ կառույց, որի

առաջին 3 հարկում նախատեսվում են գրասենյակային հասարակական տարածքներ, իսկ վերին հարկերում բնակարաններ: Շենքն ունենալու է 3 հարկ ստորգնեյա ավտոկայանատեղի՝ միացված թաղամասի ընդհանուր համակարգին: Հուշարձանի հատվածում նախատեսվում է բազմաֆունկցիոնալ շենքի 9 հարկանի հատվածը: Հարևան շենքի կողային, հուշարձանին կից ճակատը լերկ է, սվաղված ցեմենտ ավազե սվաղով, որը ենթադրում է նրան կից կառույց ունենալու տարմաբանական շարունակություն: Մակայն հուշարձանի առկայությունը և նրան շեշտելու հանգամանքը ստիպում է, որ նոր կառույցը հուշարձանի ճակատից որոշ չափով հետ տեղադրվի: Հուշարձան կառույցի կրող պատերի սխեման թելադրում է նոր կառույցի սյունացանցի տեղակայումը և համապատասխանաբար Դեպի Հանրապետության փողոց նայող արտաքին պատի տեղը: Առանցքի հեռավորությունը հուշարձանի ճակատից կազմում է 6մ: Նույն լուծումը տրված է դիտարկվող հուշարձանի դիմաց գտնվող հուշարձան-նոր կառույց հորինվածքում: Այնտեղ ևս նոր 8 հարկանի շենքի ճակատը տեղադրված է հուշարձանից մոտ 6 մետր հեռավորության վրա:

Մենք առաջարկում ենք հուշարձանն ամբողջովին ընկալելի դարձնել մարդկանց համար: Այդ նպատակով նորակառույցի հուշարձանին կից հատվածները՝ ընդհանուր առմամբ 3 հարկ, նախատեսվում են թափանցիկ ապակի: Կազմակերպվում է մեծ, ատրիումային տարածություն, ձևեռային այգի, որտեղից բացվում է հուշարձանի վերակառուցված բակային ճակատը: Բակը նախատեսվում է օգտագործել որպես սրճարան-ռեստորան: Նստատեղեր կլինեն նաև հուշարձանի պատշգամբներում և շենքում մասնակի: Շենքի մնացած հատվածները կօգտագործվեն որպես ռեստորանի խոհանոց և սպասարկման տարածքներ:

Շինարարության տեխնոլոգիան և ընթացքը նախատեսվում է իրականացնել Համաձայն <<ՇԵՄՔ>> ՍՊԸ առաջարկի, ըստ որի պետք է ամրակայել հուշարձան կառույցի հիմնական ճակատային պատը, մնացած պատերը կազմաքանդել, տեղում իրականացնել միաձույլ ե.թ. հիմնակմախք, այն հնարավորինս համապատասխանեցնելով շենքի հատակագծային լուծումներին և ներառելով վերականգնվող պատերի մեջ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներ


Տարածքի ընդհանուր մակերեսը՝ 3207 ք.մ.

- Կառուցապատման մակերեսը 0.00 նիշում՝ 2586 ք.մ.
- Ճանապարհ և մայր՝ 621 ք.մ.
- Տանիքային կանաչապատում՝ - 1106 քմ
- Պատշգամբների կանաչապատում՝ - 460քմ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:


Տարածքում առկա են քանդման ենթակա կիսաքանդ շինություններ, որոնք նախապես Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող քանդման թույլտվությունների համաձայն կքանդվեն, իսկ քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինադիր անմիջապես բեռնատարներով կտեղափոխվի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԻՆՈՒՑԱՆ ԱՊՍՏՈՆՏԱԺՄԱՆ Ա ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 3 ԱՄԻՍ
ՄԻԱՅԵԿ 0.00 ՆԻՇ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 12 ԱՄԻՍ
ԸՆՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ -- 35 ԱՄԻՍ


Նախագիծ մարտ.	Ա. Խաչատրյան		Բազմաֆունկցիոնալ իրանալիզի կառուցման նախագիծ ք. Երևան, Կենտրոն վարչ. շրջան, 33-րդ թաղամաս		
Ճարտարապետ	Հ. Մանուկյան		ՇՐՔԱՐԱՐԱՐԱՆ, ԿԱՆԱՐԱՐԱՐԱՐԱՆ, ՆԱԾԱԳԻՏ (ՇՊՆ)	ժող.	Թեթ.
Ճարտարապետ	Ս. Առաքելյան			Ն	ՇԿ-Ց
Ճարտարապետ	Ի. Բաբայան		ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	«ՆԵԱՆՈՂ» ՍՊԸ 2019 թ.	
Ճարտարապետ	Ա. Բունաթյան				



Պատշգամբների կանանաչապատում - 460քմ


Տանիքների կանաչապատում - 1106քմ







Պ	Է			Բաժնատիրոջը համալիր կառուցման նախագիծ գ. Երևան, Կենտրոն վարչ. շրջան, 33-րդ թաղամաս			
Է	Է	Ն					
Է	Է	Օ		ՇՐՈՂԱՄԱՐԿԱՆ ԿԱՐԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՐԿԱՐԳ (ՇՐՂ)		04-14	25
Է	Է						
Է	Է	Ք		ՍԵՒՍԱՐՑՍԵՐԻ ՍԵՒՍԱՐՑԻ ՍԵՒՍԱՐՑԱՍԱՆ ԶԱՐԳԵՑ		2019	



3. ԻՆԺԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Համաձայն “ԵՐԿՐԱԲԱՆ-ՈՒՏԻՔ” ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներա-երկրաբանական եզրակացության հետազոտվող տարածքին բնորոշ են հետևյալ պայմանները.

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան եզրամասում:

Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 983,11-985,13 մետրի սահմաններում:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական բնութագրերով հորատման արդյունքների հիման վրա մասնակցում են գրունտերի հետևյալ տեսակները՝

1. Լիցք չպառկապնդված, ավազակավա-խճաքարային կազմի, մասամբ՝ մեծաբեկորա-խճային, հիմ շինությունների հիմքերի մնացորդներով: Շերտն ունի համատարած բնույթ՝ 1.2-3.0 մ հզորությամբ
2. Կավավազ բաց դարչնագույն, պլաստիկ թանձրության, վարտուֆյա շերտերը՝ կարմրավուն երանգով, պինդ, կոպիճով մինչև 10-20%: Շերտն ունի համատարած բնույթ՝ վերտուֆյա մասերում, 0.6-2.4մ հզորությամբ, վարտուֆյա մասերում՝ 1.0-1.3մ:
3. Ճալաքարա-կոպճային գրունտ վատ և միջին հղկվածության, հրաբխածին ապարներից, ավազների, տեղ-տեղ կավավազների լցանյութով 20-30%: Վարտուֆյա մասերում մանր, մասամբ ավազա-կոպճային ֆրակցիաների գերակշռությամբ: Գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, ստորգետնյա ջրերի մակարդակից ցածր՝ ջրհագեցած: Շերտն ունի համատարած բնույթ՝ վերտուֆյա մասերում փոքր հզորություններով՝ 0.4-1.3մ, վարտուֆյա շերտերում՝ 10.3 մ բացված հզորությամբ:
4. Տուֆ հրաբխային, սև, միջին ամրության, կարծր, տեղ-տեղ վերին մասում խոնավ (թիվ 5; 6 հորատանցքերի շրջանում): Շերտն ունի համատարած բնույթ՝ 3.8-4.2 մ հզորությամբ:

Ստորգետնյա գրունտային ջրերը տեղամասում բացակայում են:

Շրջանի և տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (0.4g):

4. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Ընդհանուր դրույթներ

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է

- աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,
- բացատրագիր,
- կատարվող աշխատանքների անվտանգության պահպանման հրահանգներ
- աշխատանքի կատարման ժամանակացույց,
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագիծ,
- հավելված / մոնտաժային մեխանիզմի ընտրություն,
- կատարվող աշխատանքների որակային ստուգման հրահանգներ/:

Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85*՝ “Շինարարության տնողության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- ГОСТ 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

4.1 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախագծվող շինությունները իրար հարևանությամբ տեղադրվող առանձին բարձրահարկ բազմաբնակարան շենքեր են՝ որոնք թեև 0.00 նիշից ցած գտնվող ավտոկայանատեղիների ներքին լուծումներով միավորվում են սակայն նախատեսված դեֆորմացիոն կարանով կոնստրուկտիվ տեսակետից բաժանվում են իրարից:

Կառույցը 12 հարկանի է ըստ հատակագծային չափսերի 95.0x22.0մ, շինության զրոյական հատակագծային նիշից առավելագույն բարձրությամբ (պիպ) նիշը 45,5մ: Ստորգետնյա հատվածում -3.30մ և -6.60մ նիշերում ամբողջ համալիրի տարածքով նախատեսված են ավտոկայանատեղիներ:

Կառույցը հանդիսանում է որպես միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային հիմնակմախքով կրող համակարգ որի արտաքին և ներքին մակերեկությունները կարկասի լցվածքի ձևով շարվում են թեթև պեմզաբլոկե քարերով, որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կարկասին: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով:

4.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԲՅԵԿՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվում է մրցույթով:

Շենքի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

ավտոճանապարհների, հրապարակների և մայրերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների, տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀԱ միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

4.3 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԲՅԵԿՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը իրականացվում են ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարության մատակարարումը ացեթիլենով, թթվածնով իրականացվում է կենտրոնացված եղանակով:

4.4 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

• Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտը կառուցվում է որպես միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային հիմնակմախքով կրող համակարգ որի արտաքին և ներքին մակերեվույթները կարկասի լցվածքի ձևով շարվում են տուֆ քարերով, որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կարկասին: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով: Ըստ առավել համապատասխան գլուխ N 3 1. բնակելի շենքեր, N 12 կետերը համադրելով շինարարական արտադրանքի տեխնոլոգիական առանձնահատկությունների հետ շինարարական տնտղությունը սկսման օրվանից կազմում է 21 ամիս: Հաշվի առնելով սեյսմակայունության գործակիցը՝ 1,30 ($21 \times 1.3 = 27.3$), բարձր լեռնային շրջաններում աշխատանքների կատարման գործակիցը՝ 1,15 ($27.3 \times 1.15 = 31.4$) և շինարարական մրցույթային փասթաթղթերի եռամսյա նախապատրաստական և ավարտական փասթաթղթերի ձևակերպման 1 ամսյա փուլերը՝ ընդհանուր կոմպլեքսի նորմատիվ տնտղությունը ծրագրվում է $31,4 + 4 = 35$ ամիս, շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից՝

Օրացուցային պլանը, նախահաշվային արժեքի բացակայության հետևանքով, մշակվել է մեկ միավոր մասի շինարարության համար ըստ նորմերով նախատեսված այլընտրանքային ձևի / ժամանակացույց/:

4.5 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԲԵՌՆԱՄԲԱՐՁ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Որպես հիմնական մոնտաժային միջոց ընտրվել է Terex CTT 91 - 5 TS12 աշտարակային կրունկը և **Галичанин KC-65713-1** վերամբարձ ավտոկրունկը որոնք կարող են ըստ կարիքի, կամ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում տվյալ տեխնիկական ապահովելու և տեխնիկոտնտեսական նկատառումներից ելնելով փոխարինվել: Հնարավոր է օգտագործել նրանցից մեկը կամ կառուցմանը զուգահեռ փոխարինել մեկը մյուսով: Առանձին փոքրածավալ վերհանների օգտագործումը նորմալավորված չէ:

Որպես այլընտրանքային տարբերակներ կարող են առաջարկվել համապատասխան տեխնիկական տվյալներով այլ կրունկներ: Կրունկները ընտրվում և տեղադրվում են այնպես, որ սլաքի ազատ պտտական շարժման ժամանակ յուրաքանչյուր կրունկի սլաքը չկարողանա հարվածել այլ կրունկի կանգնակին:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձի, պահեստավորման մակերեսների, տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա /գծ. -9, 11/:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀԱ միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

4.6 ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- տարածքի համահարթում,
- ժամանակավոր ցանկապատի տեղադրում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- երկրաբաշխական բաժանարար ցանցի տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում / անհրաժեշտության դեպքում/,
- հողային և կառուցման աշխատանքներ մինչև զրոյական նիշ,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Հողային աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեքենայացված եղանակով՝ **KOMATSU PC 400-7** կամ **Hyundai 170W** տիպի էքսկավատորով՝, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Մշակված գրունտը պահպանվում է փորվածքների ետլիցքի նպատակով, մյուս զգալի մասը՝ տեղափոխվում:

Ետլիցքը անհրաժեշտ է իրականացնել շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով հիմնային շերտը առաջարկվում է ամրացնել **BW 216 DH-4** գլդոնով խորանարդային գրտնակով կամ **CR 3/60** տիպի տոփանիչներով, իսկ շինարարական կոնստրուկցիաների անմիջական մերձակայքում՝ ձեռքի տոփանիչներով:

Համահարթման և արտաքին ետլիցքի ժամանակ առաջարկվում է կիրառել **KOMATSU D37-EX-22** հարթաշերտի 1.77 մ³ տարողությամբ բուլդոզեր:

Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների իրականացման համար նպատակահարմար է գույքային կադապարամածի կիրառումը:

Կոնստրուկցիաների ամրանավորումը առաջարկվում է իրականացնել ինչպես առանձին ձողերով, այնպես էլ ամրանային կմախքներով և ցանցերով: Բետոնացումից առաջ անհրաժեշտ է ստուգել ամրանի, միջադիրների և կադապարամածի տեղադրման ճշտությունը, ամրանը պետք է մաքրված լինի կեղտից և ժանգից: Բետոնի խտացումը անհրաժեշտ է իրականացնել խորքային և մակերեսային թրթրիչներով:

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է ՇԵ-69Ե ավտոբետոնախառնիչներով՝ վերամբարձի միջոցով տեղադրման վայր հետագա տրմամբ:

Միաձույլ կոնստրուկցիաների իրականացումը նպատակահարմար է իրականացնել անջատ եղանակով: Առաջարկելի է տիպարային տեխնոլոգիական քարտերի կիրառումը:

Մարդկանց շարժումը բետոնացված մակերևույթների վրա և կաղապարամածի տեղադրումը թույլատրվում է բետոնի 1.5 ՄՊա ամրության ձեռքբերումից հետո:

Հիմքի, սյան կաղապարամածի քանդումը թույլատրվում է բետոնի նախագծային 70% ամրություն ձեռք բերումից հետո, ծածկի համար՝ 80%:

4.7 ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Էքսկավատոր	KOMATSU PC 400-7	2
2	Բուլդոզեր	KOMATSU D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	2
4	վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	1
5	Աշտարակային կռունկ	Terex CTT 91 - 5 TS12	1
6	Տոփանիչ	CR 3/60	2
7	Գույքային կադապարամած	կոմպլ.	3
8	Թրթրիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
9	Թրթրիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	3
10	Փոխարկիչ թրթրիչների համար	ИБ-4	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	СТН-500	3
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	3
13	Ձեռքի էլեկտրական դուր	ИЭ-1208Э	3
14	Հղկող մեքենա	ИЭ-2201	3
15	Թրթրագլղոն	НАМИ 3410	1
16	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	հաշվարկով
17	Ավտոբետոնատար	КрАЗ-65055	հաշվարկով
18	Ինքնաթափ ավտոմոբիլ	МАЗ-5550	հաշվարկով

4.8 ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՀՄԿՈՒՄԸ

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունը ապահովում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող տեխնիկական, տնտեսագիտական և կազմակերպչական միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է.

ա/կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը,

բ/արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը,

գ/շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգը ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա, Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության նախարարության 28.04.1998 թ. Թիվ 44 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ-ի դրույթների համաձայն:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաներ, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Գործույթային հսկման նպատակն է թերությունների բացահայտումը շինարարության ընթացքում և դրանց վերացման կամ կանխման միջոցառումների սահմանում:

Գործույթային հսկումը ենթադրում է շինարարական և մոնտաժային պրոցեսների տեխնոլոգիայի պահպանման, նախագծային փաստաթղթերին, նորմերին, կանոններին համապատասխանության ապահովման միջոցառումներ:

Գործույթային հսկման արդյունքները գրանցվում են շինարարության վարման մատյանում:

Գործույթային հսկումն իրականացվում է տեխնոլոգիական քարտեզի կազմում առկա որակի օպերացիոն հսկման սխեմաների և նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Գործույթային հսկման սխեմաները պետք է ընդգրկեն կոնստրուկցիաների ուրվագծերը /էսքիզները/ չափսերի և թույլատրելի շեղումների նշմամբ, որոշ դեպքերում երկրաբաշխական/գեոդեզիական/ ծառայության կամ շինարարական լաբորատորիայի կողմից հսկվող օպերացիաների և պրոցեսների ցանկը, ինչպես նաև հսկման կազմի ժամկետների և եղանակների վերաբերյալ տվյալներ:

Շինարարական տեխնիկայի շարժման գրաֆիկ

Անվանումներ	Եռամսյակներ											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Բուլդոզեր												
Էքսկավատոր												
Տոփանիչ												
Աշտարակային կրունկ												
Ինքնաթափ ավտոմոբիլ												
Բետոնեփոխադրիչ ավտոմոբիլ												

4.9 ՆՅՈՒԹԵՐԻ և ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է մոտ 6100 կգ և մասնաշենքերի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն է 800 խմ ծավալով, շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – Բանվորների թվաքանակն է՝ 26 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1050 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 26 \times 0.025) \times 1050 = 733 \text{ մ}^3/\text{շին. ժամանակահատված կամ } 0,7 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1050

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 1050 = 1575 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1,5 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2308 մ³/շին. ժամ:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին:

Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը կբերվի ավտոցիստեռներով և տարաներով: Շինարարության փուլում կնախատեսվեն բիոզուգարաններ:

Շենքի էլեկտրամատակարարումը իրականացվելու է համաձայն ՀԷՑ-ի տեխնիկական պայմանի:

4.10 ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կապալառուն շինարարություն և դրա հետ կապված աշխատանքներ իրականացնելիս ապահովում է շրջակա միջավայրի պաշտպանությունը և շինարարական աշխատանքների անվտանգությունը համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 749 հոդվածի:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից նրանց անհատական պաշտպանության միջոցների տրամադրմամբ (հատուկ արտահաքուստ, կոշիկ և այլն), բանվորների կոլեկտիվ պաշտպանության միջոցների կատարումով (արգելափակում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգլակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքերով գործող ՄՆԻՊ III-4-80* նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ հրահանգումն անց է կացվում ներածական, սկզբնական, կրկնվող, արտապլանային և ընթացիկ հրահանգումների ձևով:

Շինարարությունում զբաղված բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցում, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարիայի հետ կապված բոլոր միջոցառումների կատարումը կատարվում է աշխատանքներն իրականացվող կազմակերպության համապատասխան լիազորված անձի կողմից:

Էլեկտրաշարժիչով շինարարական մեքենաների մետաղական մասերը պետք է հողանցվեն:

Արգելվում է բարձրության վրա մոնտաժային աշխատանքներ իրականացնել քամու 6 բալլ արագության գերազանցման դեպքում:

Ավտոտրանսպորտի շարժման արագությունը շինհրապարակում պետք է գերազանցի 5կմ/ժամ:

Աշխատանքային տեղերի լուսավորման համար կիրառել 16 Վ լարմամբ էլեկրալուսավորման սարքեր: Շինհրապարակի լուսավորությունը պետք է 2 լք-ից նվազ չլինի:

Շենքի ներսում արգելվում է եռակցման և ներկարարական աշխատանքների իրականացումը պատշաճ օդափոխության բացակայության պարագայում:

Հակահրդեհային պաշտպանությունը պետք է իրականացվի համաձայն համապատասխան կանոնների: Կոնկրետ հակահրդեհային միջոցառումները պետք է մշակվեն ԱԿՆ-ում:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

5.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, 33-րդ թաղամաս հասցեում 2,4 և 5 լոտերի տարածքում և իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք:

Տարածքը գտնվում է Երևանի Հանրապետության փողոցի հարող հողամասերում որտեղ առկա են ամբողջությամբ քանդման ենթակա անկանոն կառուցապատված ցածրահարկ շինություններ:

<<Կա՛ն Մայնինգ>> ՍՊ ընկերությունը նշված տարածքները ձեռք է բերել մյուս կողմերից մասնակցությամբ ՀՀ կառավարության, որը ստանձնել է սույն պայմանագրով իրեն վերապահված իրավունքները և պարտավորությունները և ի դեմս ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանի, լիազորված ՀՀ կառավարության 2019թ սեպտեմբերի 26-ի N 1271-Ա որոշմամբ:

Նախագիծը իրենից ներկայացնում է տարածքի պարագծով կառուցապատում, որը ընդգրկում է Հանրապետության փողոցից մի հատված Թուֆենկյան կենտրոնի և Լեհաստանի դեսպանատան ետնամասով ընկած հատվածը:

Տարածքում Հանրապետության փողոցի կողմից առկա է երկհարկանի, սև տուֆ քարի ռուստավոր շարվածքով հուշարձանների ցանկում ընդգրկված շենք, որի ճակատային մասը նախատեսվում է ամբողջությամբ պահպանել և վերականգնել:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան եզրամասում:

Մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 983,11-985,13 մետրի սահմաններում:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը և ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և ջրաերկրաբանական բնութագրերով հորատման արդյունքների հիման վրա մասնակցում են գրունտերի հետևյալ տեսակները՝

Լիցք չպառկապնդված, ավազակավա-խճաքարային կազմի, մասամբ՝ մեծաբեկորա-խճային, հին շինությունների հիմքերի մնացորդներով: Շերտն ունի համատարած բնույթ՝ 1.2-3.0 մ հզորությամբ:

Մոտակայքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան:

Ստորգետնյա գրունտային ջրերը տեղամասում բացակայում են:

Շրջանի և տեղամասի սեյսմիկ ֆոնային արժեքը որոշված է 9 բալ (0.4g):

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Տարածքում ծառաթուփային բուսականությունը բացակայում է: Մոտակայքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան: Տեղամասում մինչև 38 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրերի հորիզոնը հատվել է 22,1-26,7մետր խորություններում:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

1.1 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Ագրո" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդերևութա- բանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	942	-4,2	-1,2	5,2	12,3	17,0	21,6	25,5	25,3	20,6	13,3	5,6	-0,8	11,7	-30	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Ագրո" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	78	74	64	58	58	51	45	45	49	61	74	79	61	62	33

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Ագրո" օդերևութաբանական կայանի տվյալներով



Բնակավայրի անվանումը	Տեղումների Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Զնաձածկույթ		
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Զյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	22	24	31	41	46	27	16	8	11	27	26	23				
Երևան	20	26	33	25	40	25	21	24	29	33	23	24	40	46	41	113

5.2 ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Երևան քաղաքում որոշված աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

5.3 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

5.4 ՀՈՂԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

5.5 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԵՐ

Բազմաբնակարան բնակելի շենքերի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 101500 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 89000 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 12500 խմ կարճաժամկետ կապահետավորվի շինհրապարակի տարածքում և օգտագործվի որպես հետլիցք:

5.6 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երևանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն գարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuiflora*, *Ziziphora persica*, *Alyssium desertorum*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ

այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարաձեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizocephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին եւ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (*Hemiechinus auritus*, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodryadusa armeniaca* (ծղրիդներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տենսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*), Ասիական լայնական չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթեւ չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթեւ սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաքույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկովկասյան սահնօձ:

5.7 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 6.1տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 800իսմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, այդ թվում քանդումից առաջացող, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

7. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

7.1 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- շինարարական աշխատանքների ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:

8.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական

հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25լիմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

8.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

8.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

8.5 ԱՂՄՈՒԿ և ԹՐԹՈՒՄ

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

8.6 ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Նախագծով 0 նիշում կանաչապատում չի նախատեսվում, նախատեսված է տանիքային կանաչապատում՝ 1106 քմ և պատշգամբների կանաչապատում՝ 460քմ:

9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարության համար նախատեսվում է 4000000 դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառու պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինարարական աշխատանքներում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրառել են հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինարարական չի թույլատրվի: (d) Շինարարական աշխատանքների ժամանակ շենքը ծածկել փոշու տարածումը կանխող համապատասխան ցանցով:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսահմանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում

Տարածքի բարեկարգում/ կանաչապատում Աղմուկի և թրթռումների կառավարում Թափոնների կառավարում	Շրջակա տարածքների աղ տոտում	- փայտե կոնստուկցիաներ, մետաղական մասերի և խողովակների օգտագործում ինարարության ընթացքում - կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների; - ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը
--	--	--

	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ	Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;
--	---	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակ ամիջոց	Կատարող
---------------	-------------------------	-------------------	--------------------	----------------	---------


Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարների բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վատահեղի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կաշտակման մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նախաձայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



**ԲԱԺՆԵՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Երևան

30 սեպտեմբեր 2019թ.


Էդուարդ Զամլետի Մելիքյանը (անձ. AM 0307079 տրվ. 001-ի կողմից 20.05.2011թ.), հասցեն՝ ք. Երևան, Այգեձոր 32/2 տ.) **այսուհետև՝ Կողմ 1**, մի կողմից, և «ԿԱԵՌ ՄԱՅՆԻԼԳ» ՍՊԸ-ն (ԲՎՅՅ 00182902, հասցեն՝ ք. Երևան, Կոմիտաս 1, բն. 182) **այսուհետև՝ Կողմ 2**, ի դեմս տնօրեն Ռուբեն Կարախանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև միասին՝ **Կողմեր**,

Մասնակցությամբ Զայաստանի Զանրապետության կառավարության, որը ստանձնում է սույն պայմանագրով իրեն վերապահված իրավունքները և պարտականությունները ի դեմս ԶԶ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանի, չի ազդրված ԶԶ կառավարության 2019թ. սեպտեմբերի 26-ի N 1271-Ա որոշմամբ

կնքեցին բաժնեմասի առուվաճառքի սույն նախնական պայմանագիրը, (այսուհետև՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Պայմանագրով կողմ 1-ը և կողմ 2-ը համաձայնվում են մինչև 2020 թվականի մարտի 30-ը պայմանագրով նախատեսված կարգով կնքել «Բիթլիս Բոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (պետական գրանցման համար՝ 222.110.856165, ԲՎՅՅ՝ 02637579, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արգիշտի 7/8) այսուհետև՝ **նախնական** ընկերության, 100% բաժնեմասի (այսուհետև՝ բաժնեմաս) առուվաճառքի պայմանագիրը (այսուհետև՝ **նախնական** առուվաճառքի պայմանագիր):
- 1.2. Առուվաճառքի պայմանագրով կողմ 1-ը հատուցմամբ օտարելու է բաժնեմասը Կողմ 2-ին, իսկ Կողմ 2-ը ձեռք է բերելու բաժնեմասը և վճարելու է բաժնեմասի պայմանագրով որոշված արժեքը:
- 1.3. Կողմերը ընդունում են, որ ընկերությունը հանդիսանում է Զայաստանի Զանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 22-ի N 332-Ն որոշման (այսուհետև՝ որոշում) N 1 հավելվածում նշված թիվ 4 տարածքի ձեռք բերողը և բաժնեմասի օտարումը տեղի է ունենալու՝
ա. պայմանագրով նշված ժամկետում պայմանագրի N 1 և 2 հավելվածներով ներկայացված թվով 2 տարածքների (այսուհետև միասին՝ տարածք)՝ որոշմամբ նախատեսված օտարման գործընթացները ընկերության կողմից ավարտելու և օտարվող տարածքների սեփականատեր դառնալու դեպքում, կամ
բ. տարածքի՝ որոշմամբ նախատեսված օտարման գործընթացները ընկերության կողմից մասնակի ավարտելու և օտարվող տարածքների մի մասի (ոչ



ամբողջական) սեփականատեր դառնալու դեպքում:

- 1.4. Կողմ 1-ը երաշխավորում է, որ առուվաճառքի պայմանագրի կնքման պահին հանդիսանալու է ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և առուվաճառքի պայմանագրի կնքման ծանուցումը կտա կողմ 2-ին մինչև 2020 թվականի մարտի 30-ը:
- 1.5. Կողմ 2-ը երաշխավորում է, որ պայմանագրի 1.4-րդ կետով նախատեսված պարտականությունը Կողմ 1-ի կողմից կատարվելու և համապատասխան ծանուցումը ստանալուց 30 օրվա ընթացքում կկնքի առուվաճառքի պայմանագիրը,
- 1.6. Կողմ 2-ը հավաստիացնում է, որ ծանոթացել է օրենքին, որոշման, ինչպես նաև ընկերության և երևանի քաղաքապետի միջև 2018 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրով սահմանված ընկերության պարտավորություններին:
- 1.7. Կողմ 1-ը հավաստիացնում է, որ, առուվաճառքի պայմանագրի կնքման պահին բաժնեմասը ամբողջությամբ հանդիսանալու է իր սեփականությունը, բաժնեմասը և (կամ) ընկերության ակտիվները վեճի առարկա չեն հանդիսանալու, արգելանքի և երրորդ անձանց օգտին գրավադրված չեն լինելու, երրորդ անձինք պահանջներ չեն ունենալու բաժնեմասի նկատմամբ, բաժնեմասը կամ ընկերության ակտիվները ունենալ կերպով անբարենպաստ չեն լինելու, բացառությամբ պայմանագրի 1.6-րդ կետով ներկայացված պարտավորություններին:

Այն դեպքում, եթե առուվաճառքի պայմանագրի կնքման պահին ընկերության կողմնա պարտավորությունն կողմ 1-ի նկատմամբ, ապա կողմերը առուվաճառքի պայմանագրում կնախատեսեն նաև պահանջի իրավունքի զիջման դրույթ, որի գինը կներառվի (առանց ավելացնելու) առուվաճառքի պայմանագրի գնի մեջ:

2. Առուվաճառքի պայմանագրի գինը և վճարման պայմանները

- 2.1. Բաժնեմասի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևին համապատասխան՝
 ա. պայմանագրի 1.3 կետի ☐ա☐ ենթակետով սահմանված դեպքում
 $X^*(\text{անգամ}) \cdot Y - (\text{հավասար է}) Z$ որտեղ
 X - որոշմամբ սահմանված և ընկերության կողմից ձեռք բերված տարածքի ընդհանուր մակերեսի չափն է (քառ. մ):
 Կայմանագրի կնքման պահին տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2232.34 (երկու հազար երկու հարյուր երեսուներկու ամբողջ երեսուներկու հարյուր երրորդական) քառ. մ (1293.43 քառ. մ + 938.91 քառ. մ) և կողմ 1-ն ու կողմ 2-ն ընդունում են, որ առուվաճառքի պայմանագրի կնքման պահին այն կարող է մինչև 3 տոկոսի շեղում ունենալ,
 Y - 904400 (ինը հարյուր չորս հազար չորս հարյուր) դրամ (պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած ԱՄՆ-ի դոլար-դրամ միջին փոխարժեքին համապատասխան համարժեք է 1900 ԱՄՆ-ի դոլարին), որը սակայն ենթակա է փոփոխման (վերահաշվարկման)

պայմանագրի 2.2.2-րդ կետով սահմանված կարգով վճարման և պայմանագրի կնքման օրվա դրույթով ամբ 33 կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 ԱՄՆ-ի դոլար-դրամ փոխարժեքի փոփոխման դեպքում: Այս դեպքում վերահաշվարկված գումարը պետք է հավասար լինի պայմանագրի 2.2.2-րդ կետով սահմանված կարգով վճարման օրվա դրույթով ամբ 33 ԿԲ-ի կողմից սահմանված ԱՄՆ-ի դոլար-դրամ միջին փոխարժեքին համարժեք 1900 ԱՄՆ-ի դոլարին, չհասնեմասի արժեք,

բ. պայմանագրի 1.3 կետի ☐ բնթակետով սահմանված դեպքում

$X \cdot (W + (q - m) \cdot W) = (h + a \cdot W) \cdot Z$, որտեղ

X - որոշմամբ սահմանված և ընկերության կողմից տարածքում ձեռք բերված հողատարածքների ընդհանուր մակերեսի չափն է (քառ.մ),

Y - 904400 (ինը հարյուր չորս հազար չորս հարյուր) դրամ (պայմանագրի կնքման օրվա դրույթով ամբ 33 ԿԲ-ի կողմից սահմանված ԱՄՆ-ի դոլար-դրամ միջին փոխարժեքին համապատասխան համարժեք է 1900 ԱՄՆ-ի դոլարին), որը սակայն ենթակա է փոփոխման (վերահաշվարկման) պայմանագրի 2.2.2-րդ կետով սահմանված կարգով վճարման և պայմանագրի կնքման օրվա դրույթով ամբ 33 կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 ԱՄՆ-ի դոլար-դրամ փոխարժեքի փոփոխման դեպքում: Այս դեպքում վերահաշվարկված գումարը պետք է հավասար լինի պայմանագրի 2.2.2-րդ կետով սահմանված կարգով վճարման օրվա դրույթով ամբ 33 ԿԲ-ի կողմից սահմանված ԱՄՆ-ի դոլար-դրամ միջին փոխարժեքին համարժեք 1900 ԱՄՆ-ի դոլարին,

W - օրենքով սահմանված դատական կարգով սեփականության օտարման ընթացիկ (չավարտված) գործերի շրջանակներում դատարանի կամ նոտարի դեպոզիտի հանձնված փոխհատուցման գումարների հանրագումարը:

Չհասնեմասի արժեք:

2.2. Պայմանագրի 2.1-ին կետով նշված գումարը կողմ 2-ը կողմ 1-ին է վճարում կանխավճարների տեսքով հետևյալ կարգով՝

2.2.1 ընկերության կողմից պայմանագրի N 1 և 2 հավելվածներով ներկայացված օտարվող տարածքներից յուրաքանչյուր հողատարածքի (գույքային միավորի) վերաբերյալ ընկերության սեփականության իրավունքը գրանցելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կողմ 1-ը ծանուցում է կողմ 2-ին՝ համապատասխան քառ.մ մակերեսով հողատարածք սեփականության իրավունքով ձեռք բերելու մասին ծանուցմանը կից ներկայացնելով ձեռք բերված հողատարածքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը,

2.2.2 կողմ 2-ը, ստանալով կողմ 1-ի՝ պայմանագրի 2.2.1-ին կետով սահմանված ծանուցումը պարտավորվում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կողմ 1-ի՝ պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցել պայմանագրի 2.1-ին կետով սահմանված կարգով հաշվարկված գումար ($X \cdot (W + (q - m) \cdot W)$), որտեղ X հանդիսանում է տարածքում սեփականության իրավունքով ձեռք բերված հողամասի մակերեսը),

2.2.3 կողմ 1-ը պարտավորվում է կողմ 2-ի կողմից պայմանագրի 2.2.2-րդ կետով սահմանված պարտավորությունը պատշաճ կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովվել ընկերություն կողմից սեփականության իրավունքով ձեռք բերված հողատարածքի գրավադրումը կողմ 2-ի օգտին՝ ի ապահովումն պայմանագրով ստանձնած առևժանգառքի պայմանագրի կնքման պարտավորության կատարման:

2.3. Պայմանագրով նախատեսված վճարումները կատարվում են կողմ 1-ի՝ ստորև նշված բանկային հաշվին.
Բանկ՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ
h/h 2500010194630100
Շահառու՝ Էդուարդ Մելիքյան

2.4. ՀՀ կառավարությունը հավաստիացնում է, որ
2.4.1 կիրականացնի օրենքով իրեն վերապահված բոլոր իրավասությունները ապահովելու որոշմամբ ու օրենքով սահմանված կարգի և ժամկետների պահպանումը, ինչպես նաև իրեն վերապահված բոլոր իրավասությունների շրջանակներում կօժանդակի տարածքի օտարման գործընթացին,
2.4.2 կաջակցի տարածքում կողմ 2-ի կողմից քաղաքաշինական ծրագիր և կառուցապատման աշխատանքներ իրականացնելու՝ համար հետևյալ թույլ տվող իրավասություններին՝ տրամադրման իրավասում չունեցող կողմից համաձայն հաստատված ճարտարապետականագծային առաջադրանքի և մշակված գլխավոր հատակագծի
Պայմանագրի N 1 հավելվածով ներկայացված տարածքի վերաբերյալ
Հարկայնությունը՝ մինչև 12 հարկ, առավելագույն բարձրությունը մինչև 45մետր,
Կառուցապատման խտությունը՝ մինչև 100%,
Նպատակային նշանակությունը՝ խառը կառուցապատման,
Պայմանագրի N 2 հավելվածով ներկայացված տարածքի վերաբերյալ
Հարկայնությունը՝ մինչև 9 հարկ, առավելագույն բարձրությունը մինչև 30մետր,
Կառուցապատման խտությունը՝ մինչև 100%,
Նպատակային նշանակությունը՝ խառը կառուցապատման,

2.4.3 կաջակցի, որ մինչև տարածքում կատարվելիք կառուցապատման աշխատանքների ավարտը երևանի 33-րդ քաղաքում ամրագրված կառուցապատվող շենքերի կոմունիկացիոն (գազ, էլեկտրաէներգիա, ջուր և կոյուղի) կետերը/հանգույցներ, որտեղից հնարավոր կլինի ապահովել քաղաքաշինական ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ կառուցվող շենքերի գազամատակարարումը, ջրամատակարարումը, էլեկտրաէներգիայի մատակարարումը, և կոյուղու /կեղտաջրերի հեռացումը:

3. Պայմանագրի ուժի մեջ մտնելը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4. Սեփականության իրավունքի փոխանցումը

4.1. Բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը կողմ 2-ին է փոխանցվում 33 օրենսդրությամբ նախատեսված կարգով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրի 1.5-րդ կամ 2.2.2-րդ կետերով սահմանված ժամկետներն ավելի քան մեկ օր ուշացնելու դեպքում, կողմ 1-ն իրավունք ունի կողմ 2-ից պահանջել վճարել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գնի 0.05 %-ի չափով, բայց ոչ ավելի քան պայմանագրի գնի 5 տոկոսի չափով: Սույն կետում նշված տույժի վճարումը չի բացառում կողմ 1-ի՝ իրավունքների պաշտպանության այլ միջոցներ կիրառելու հնարավորությունը, ինչպես նաև չի ազատում կողմ 2-ին իր պարտականությունները բեռնադրված կատարելու պարտականությունից:

5.2. Կողմ 2-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները նախատեսված կերպով 30 օրվա ընթացքում կատարելու դեպքում կողմ 1-ն իրավունք կունենա միակողմանի լուծել պայմանագիրը: Այս իրավունքը չի բացառում պայմանագրով նախատեսված այլ իրավունքների իրացումը կողմ 1-ի կողմից, որը կարող է դրանք իրացնել սեփական հայեցողությամբ:

5.3.3 Կողմ 1-ի կողմից պայմանագրի 1.4-րդ կետով նախատեսված պարտականությունները 60 օրվա ընթացքում կատարելու դեպքում կողմ 2-ն իրավունք կունենա կողմ 1-ից պահանջել տույժ՝ 60 օրվա ընթացքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար պայմանագրի գնի 0.05 %-ի չափով, բայց ոչ ավելի քան պայմանագրի գնի 5 տոկոսի չափով: Սույն կետում նշված տույժի վճարումը չի բացառում կողմ 2-ի՝ իրավունքների պաշտպանության այլ միջոցներ կիրառելու հնարավորությունը, ինչպես նաև չի ազատում կողմ 1-ին իր պարտականությունները բեռնադրված կատարելու պարտականությունից:

5.4. Կողմ 1-ի կողմից որոշմամբ սահմանված տարածքի ձեռքբերման պարտականությունը պայմանագրով նախատեսված ժամկետից 30 օր ուշացնելու դեպքում կողմ 2-ն իրավունք կունենա միակողմանի լուծելու պայմանագիրը: Այս իրավունքը չի բացառում պայմանագրով նախատեսված այլ իրավունքների իրացումը կողմ 2-ի կողմից, որը կարող է դրանք իրացնել սեփական հայեցողությամբ:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունն հայտարարելը,

քաղաքական հոգևոր մեները, գործադրողները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն, որոնք անհնար են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Ծանուցումներ

- 7.1. Պայմանագրի համաձայն կամ դրա շրջանակներում տրվող բոլոր ծանուցումները կամ այլ հաղորդագրությունները պետք է լինեն գրավոր, առաքված առձեռն, պատվիրված նամակով (փոստային ծանուցությունները համարվում են առաքված՝ առաքման օրը, եթե առաքված են առձեռն, բ. փոստային ծանուցությանը հանձնելուց հետո 10-րդ օրը, եթե առաքված են պատվիրված նամակով կամ հետադարձ ծանուցման վրա կատարված ստացման նշման օրը: Կողմերը կարող են փոխել իրենց հասցեները՝ նշված կարգով ծանուցելով միմյանց: Ծանուցման դեպքում բացասական ռիսկերը կրում է ծանուցող կողմը:

8. Վեճերի լուծման կարգը


- 8.1. Պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն չհասնելու դեպքում վեճերի լուծումը, կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, Հայաստանի Հանրապետության դատական կարգով:


9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1. Պայմանագիրը մեկնաբանվում է ՀՀ օրենքների համաձայն:
- 9.2. Պայմանագրի հավելվածը (հավելվածներ) հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:
- 9.3. Կողմերը համաձայնում են պայմանագրի դրույթները ներառել առավելագույնս պայմանագրում:
- 9.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Առավելագույնս պայմանագիրը կազմվելու է հայերենով՝ երեք օրինակից, որոնք կուսենան միևնույն իրավաբանական ուժը: Կողմերից յուրաքանչյուրին տրվելու է պայմանագրի մեկ օրինակ: Երրորդ օրինակը տրվելու է կողմ 2-ին՝ ընկերության մասնակիցների ղեկավարում համապատասխան փոփոխության իրականացման համար:

ՍՍԼԻՔԻԱՆ

[illegible]





Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ (ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N _____ « _____ » 2018թ.

Օբյեկտ Քաղաքային կառուցման համայնքի կառուցման (բարձր ռիսկայնության օբյեկտ, IV կարգի)
(նախագծման փուլերը և այլն) Նախագծային փաստաթղթերի մշակման համար

Գտնվելու վայրը Կենտրոն վարչական շրջան, 33-րդ թաղամաս, ՀՀ կառավարության _____ 2018թ. հ. _____ թ. _____
(վարչական շրջանի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող ՀՀ Կառավարության _____ 2018թ. հ. _____ թ. _____
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջարկների տրամադրման հիմքը ՀՀ կառավարության _____ 2018թ. հ. _____ թ. _____
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անիմացիոն փաստաթղթեր)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
(սակրդակից) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը պատկերվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500

Քաղաքի՝ գերակա հանրային շահ ճանաչված թաղամասում, Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, Գործառնական նշանակությունը՝ խաղող կառուցապատման
(հողամասի դիրքը քաղաքային միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

1. Հողամասը գտնվում է _____

2. (*) Հողամասի չափերը S=1615.39մ²
(հողամասի սահմանները՝ կողմնատային նշանակությամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը Հողամասն ունի անկախ և անջատվող թաղամասի և անջատվող թաղամասի ենթակա, անկանոն կառուցապատված ցածրահարկ շենքեր չեն կառուցվել:
(ոչինչի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդակման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական կրթությունը և այլն), կառուցապատման, բարելավման և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Հանրապետության, Բուզանդի, Խանջան, Չայկովսկու փողոցներ, Տ.Մեծի պողոտա, Ներքին թաղային նախագծվող ճանապարհներ:
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Կից գործող ինժեներական ցանցեր և հաղորդակցություններ:
(ջրատարակարգման, կոյուղու, գազատարակարգման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

6. (*) Կից հողամասեր Քաղաքի՝ գերակա հանրային շահ ճանաչված թաղամասեր, բնակելի և հասարակական շենքեր:
(կից հողատիրությունների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) Տարածքում առկա է փոքրիկ նշանակության հուշարձան շենք /հ.203.9 բնակելի տուն/
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատկապես սահմանափակումներ _____
(տեղանքում գործող արտադրական, պաշտպանական օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ԴԱՀԱՆՔՆԵՐԸ
(սակրդակից) Նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը պատկերվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500

9. Ճարտարապետահատկապես պահանջներ Մշակել քաղաքային կառուցման համայնքի նախագիծ ՀՀ կառավարության _____ 2018թ. հ. _____ թ. _____
պահանջներով ընդհանուր թաղամասի համար մշակված ճանապարհային ցանցի, հրապարակի և շենքերի ծավալային հորինվածքների սկզբունքները:
(զեկնելով ՀՀ օրենսդրության և երրորդական կառուցման փաստաթղթերի պահանջներին, առկա քաղաքային ծրագրային փաստաթղթերի դրույթներին կամ դրանց բացակայության դեպքում՝ կառավարված (կառավարող) քաղաքային միջավայրի պայմաններին, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, պատերների, պատուհանների համապատասխանության և գույնային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) _____

9.2. (*) հեռավորությունը հարևան հողատիրությունների (օբյեկտներից) (մետր) Նախագիծը և առկա հարակից շենքերից կառուցվող վերջնական մասի հեռավորությունները նախագիծը գործող երրորդական պահանջների համաձայն:

9.3. թույլտվության բարձրությունը Մինչև 9 հարկ առավելագույն բարձրությունը մինչև 30մ:

9.4. կառուցապատման խտության գործակիցը _____
(կառուցվող (սկզբնական) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը _____
(կառուցապատվող (սկզբնական) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) Ըստ մշակված կառուցապատման սխեմայի

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) Ըստ մշակված կառուցապատման սխեմայի

9.7. այլ պահանջներ

- Նախագիծը պահանջները հարակից տարածքների շահագործման երրորդական պահանջները:
- Հանրապետության լուծումները մշակել համաձայն պատկերային առաջարկների՝ հաշվի առնելով երրորդական պահանջները:
- Շենքերում նախագիծը կենտրոնացված օդորակման և ջեռոցման համակարգեր:
- Տանիքները նախագիծը կազմակերպված ջրահեռացմամբ:

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանակը կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հեռավորությունները Ամբողջությամբ քանդված ենթակա, անկանոն կառուցապատված ցածրահարկ շենքեր չեն կառուցվել:

25

25

Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանում է Նախագծային փառաքանի հրապարակման հաստատության

Երևանի քաղաքապետ՝
Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ.

25



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «15» Օգոստոսի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԲԻԹԼԻՍ ԶՈՆԱԹՐԱԶՇՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Հանրապետության փողոց 46 շենք, 3 բնակարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26.03.2015թ. բաժանիչ /առանձնացման/ հաշվեկշիռ

4. ՀՈՂԱՍԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

Վկայական N 18082017-01-0009, գաղտնաբառ՝ HV9TZNIF4GPD

Էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-006-0207-0031-001-003	Բնակարան	73.68 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0.0514 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 73.68/638.71: Սույն վկայականը հանդիսանում է 15082017-01-0222 վկայականի ուղղված տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարտին Սեդրակյան
զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՐՎԻՍ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԴԱՍՏՐ

Վկայական N 18082017-01-0009, գաղտնաբառ՝ HV9TZNIF4GPD

էջ 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «15» Օգոստոսի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԲԻԹԼԻՍ ԶՈՆԱԹՐԱԹՇՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Հանրապետության փողոց 46 շենք, 5 բնակարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Բաժանիչ առանձնացման հաշվեկշիռ 26.03.2015թ.

4. ՀՈՂԱՍՏԱՍԻ ԲԵՆԻԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0207-0031

Մակերեսի չափը (հա)՝ 0.0514

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՆՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 15082017-01-0221, գաղտնաբառ՝ PSLVSQR1C4JB

Էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-006-0207-0031-001-005	Բնակարան	59.56 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Սեփականատիրոջն է փոխանցվում շենքին հատկացված 0.0.0514 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների 60/639 բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արտակ Խաչատրյան
գրառեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր



Վկայական N 15082017-01-0221, գաղտնաբառ՝ PSLVSQR1C4JB

Էջ 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «15» Օգոստոսի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԲԻԹԼԻՍ ԶՈՆԱԹՐԱԾԵՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆԿԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Կենտրոն Հանրապետության փողոց 46 շենք, 13 և 14ա բնակարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

26.03.2015թ. բաժանիչ /առանձնացման/ հաշվեկշռի:

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

Վկայական N 15082017-01-0227, գաղտնաբառ՝ YTARYB8N7ERD

Էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-006-0207-0031-001-006	Բնակարան	29.8 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա է 32.8քմ ինքնակամ կիսանկող:Առկա է պայմանագրային պարտավորություններ: Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0.0514 հա մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 30/639:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարտին Սարգսյան
գրադեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.



Վկայական N 15082017-01-0227, գաղտնաբառ՝ YTARYB8N7ERD

Էջ 2

«ՇԵՄՔ» ՍՊԸ
Լիցենզիա 16844



ՀՀ, ք. Երևան 0014,
Ահարոնյան 3/3
Հեռ.՝ +374 93 45 49 01



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի Կենտրոն վարչական շրջանի Հանրապետության
փողոցի №46 հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի և
այն վերակառուցմամբ վերականգնելու հնարավորության
վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ – 2020



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«ՇԵՄՔ» ՍՊԸ

Ա. Սամսոնյան

«30» հուլիս 2020թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Երևանի Կենտրոն վարչական շրջանի Հանրապետության փողոցի №46
հասցեում գտնվող շենքի տեխնիկական վիճակի և այն վերակառուցմամբ
վերականգնելու հնարավորության վերաբերյալ**

Հետազննությունը կատարվել է «Շենք» ՍՊԸ-ի և «ԿԱԵՆ Մայնինգ» ՍՊԸ-ի միջև
18.06.2020թ. կնքված պայմանագրի համաձայն:

Վերը նշված հասցեի մասնաշենքն իրենից ներկայացնում է հարթ տեղանքի
վրա տեղակայված, 1800-ական թվականներին անհատական նախագծով
իրականացված, մասնակի նկուղաբաժնով, «Դ»-աձև հատակագծային տեսքով,
երկհարկանի բնակելի կառույց: Այն գլխավոր ճակատի կողմում ունի միաձույլ ե/բ
բարձակասալային, իսկ բակային մասում փայտե տարրերից հավաքված կցակառույց
պատշգամբներ:

Շենքի չափերը և դասավորությունը համապատասխանում են չափագրական
գծագրերին (կից ներկայացվում են):

Շենքի կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական և լայնական կրող
պատերով և միջհարկային ծածկերով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաշարվածքից:

Պատերն իրականացված են՝ դեպի Հանրապետության փողոց կողմնորոշված
«Ա» առանցքում կանոնավոր ձևերով մշակված, սև գույնի խոշորաչափ
տուֆաքարերից, կրաավազային շաղախի կիրառմամբ, իսկ մնացած առանցքներով
պատերը հիմնականում փոքրաչափ, կիսամշակված ու անմշակ տուֆաքարերից,
կավաավազային շաղախի կիրառմամբ, որոնք արտաքինից դարսասվաղված են
կրաավազային շաղախով, իսկ ներսից հարդարված կավաավազից ու մանրահարդից
բաղկացած ծեփաշաղախով:

Պատերում բացվածքներն ունեն սեպածն քարերից փականաշար որմածքով
լուծված և փայտե տարրերից իրականացված բարավորներ:

Միջհարկային ծածկերն իրականացված են փայտե տարրերից:

Սանդուղքն իրականացված է պողպատե տրամատներից թեքահեծաններով, ե/բ հատավոր աստիճաններով և միաձույլ ե/բ հարթակներով:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, թիթեղից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Հարկ է նշել, որ շենքը, որի գլխավոր ճակատն ունի որմածքի ինքնատիպ հորինվածք ու ձևավորում, իր ծավալատարածական լուծումներով հանդիսանում է ճարտարապետական և պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձան-կառույց:

Ձևմամբ պարզվեց հետևյալը.

- Շենքը տևաբար մնալով անմորոգ ու անխնամ վիճակում, ձեռք է բերել տարաբնույթ վնասվածքներ:
- Արտաքին սալվածքը մասամբ բացակայում է և մասամբ գտնվում է անբարեկարգ վիճակում, ինչը նպաստում է տեղումնային ջրերի ներհոսքին դեպի պատերի հիմնախարսխային մասերն ու հիմնատակերը, նպաստելով դրանց թրջմանն ու թուլացմանը:
- Պատերի ստորին հատվածները պարբերաբար թրջվել և գտնվում են խոնավ ու ջրահագ վիճակում, տեղի է ունեցել շարաշաղախի մակերևութային և խորքային հողմնահարում, որի արդյունքում առաջացել են դատարկ, խոռոչավորված, շերտավորված ու փքված վթարավտանգ տեղամասեր:
- Շենքը ենթարկվել է անհավասարաչափ նստվածքային դեֆորմացիաների, որի արդյունքում պատերում առաջացել են մինչև 40մմ բացվածքի բնորոշ ճաքեր ու տարանջատումներ, որոնք առավելապես զարգացած ու արտահայտված են մուտքամասն ընգրկող «Ա»-«Գ» և «1»-«2» առանցքներով պարփակված ծախակողմյան մասում, ինչպես նաև «Ա»-«Ե» և «3»-«5» առանցքներով պարփակված աջ թևային հատվածում:
- Տանիքածածկույթի, ինչպես նաև ջրհավաքների ու ջրհորդանների վնասվածության պատճառով, վերնածածկի փայտե տարրերում տեղի են ունեցել խոնացման և կենսաբանական քայքայման(փտման) երևույթներ, որոնց արդյունքում առաջացել են ճկվածքներ, կոտրվածքներ ու փլուզման ենթակա վթարավտանգ տեղամասեր: Նմանատիպ երևույթներ կան նաև փայտե տարրերից պատշգամբներում, որոնք գտնվում են շենքից տարանջատված, հորիզոնական ու ուղղաձիգ մոնտաժային դիրքերից շեղված

ու վթարավտանգ վիճակում:

- Ֆիզիկապես մաշված վիճակում են մասնաշենքի հատակները, դռները, պատուհանները, ներքին և արտաքին հարդարումն ու ինժեներական համակարգերը:
- Գլխավոր ճակատի պատի կրաավազային շաղախի ամրության ստուգումներից պարզվեց, որ այն գտնվում է 100-120 կգ/սմ² սահմաններում, իսկ վերցված նմուշի քիմիական անալիզի արդյունքները ցույց տվեցին, որ այն հիմնականում կազմված է ~40,0% հիդրավլիկ կրից, մոտ 32% սիլիկատային ավազից, մնացածը տարբեր էլեմենտներ պարունակող կավահողից: Շաղախի քիմիական անալիզի արդյունքները և նրանում պարունակվող նյութերը տես կից ներկայացված Հավելված 1-ի աղյուսակ 1-ում:
- Մնացած պատերի կավաավազային շաղախի ամրություն ստուգումներից պարզվեց, որ այն գտնվում է 3,5-5,0 կգ/սմ² սահմաններում, իսկ վերցված նմուշի նյութակազմի ստուգումից պարզվեց, որ այն բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝ մոտ 30% 0,6-5,5մմ ֆրակցիայի սիլիկատային ավազից, մոտ 68% 0-0,5մմ մասնիկների պարունակությամբ կավահողից, իսկ մնացածը տարբեր էլեմենտներից և ջրում լուծվող նյութերից (տես Հավելված 1, աղյուսակ 2):
- Պատերի որմածքում օգտագործված քարերի ֆիզիկամեխանիկական հատկություններն ու պետրոգրաֆիկ տվյալները բնորոշ են երևանյան տիպի տուֆերին:

Շենքի ընդհանուր և առանձին մասերի առկա վիճակի տեսքը, լուծումները և առավել հատկանշական վնասվածքները տես կից ներկայացվող հավելված 2-ի 1-45 դրվագային լուսանկարներում:

Ելնելով հետազննության արդյունքներից եզրակացվում է.

- ❖ Շենքի տեխնիկական վիճակը ըստ կրող կոնստրուկցիաների վնասվածության, նորմատիվ սանդղակների չափորոշիչներով ընդհանուր առմամբ գնահատվում է խիստ անբավարար և վթարավտանգ, իսկ վնասվածության մակարդակը դասվում է 4-րդ աստիճանի:
- ❖ Անկախ վնասվածության մակարդակից, որպես պատմամշակութային արժեք ունեցող հուշարժան-կառույց, շենքը ենթակա է ուժեղացմամբ վերականգնման, որի համար առաջարկվում է՝

- Ժամանակավոր կանխարգելիչ կոնստրուկցիայի տեղադրումով ամրակայել ու պահպանել գլխավոր ճակատի պատը(տես կից ներկայացվող սխեման):
- Այնուհետև կազմաքանդել տանիքը, միջհարկային ծածկերը, պատշգամբները և կավաավազային շաղախով որմնած պատերը, առանձնացնելով կրկնաօգտագործման համար պիտանի նյութերը:
- Կազմաքանդումից հետո, սկսած հիմքից, միաձույլ ե/բ և մանրահատ բետոնից ամրանավորված ճնշածեփ շապիկավորումով ուժեղացնել գլխավոր ճակատի ամրակայված պատը, իսկ մնացած կազմաքանդված պատերը վերաշարել, առանձնացված քարերի և նորերի օգտագործմամբ, կիրառելով կրաավազային բարդ շաղախ, դրան հավելելով մանրացված բազալտաթելեր:
- Կրկնաօգտագործման համար պիտանի փայտանյութի և նորերի կիրառմամբ վերականգնել միջհարկային ծածկերն ու պատշգամբները և իրականացնել արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ նոր լանջավոր տանիք:
- Շենքում կատարել ներքին ու արտաքին հարդարման և բարեկարգման աշխատանքներ:
- Պատերն արտաքինից դարգասվաղել կրաավազային շաղախով, իսկ ներսից հարդարել գաջից ու հարդից բաղկացած համապատասխան գուներանգի ծեփաշաղախով, կամ այլ ընդունելի տարբերակով:
- ❖ Ամրադառնալով պատվիրատուի առաջարկին, այն է՝ շենքը վերակառուցմամբ վերականգնելուն և վերջինիս վրա վերնակառույց հարկերի ավելացմանը, ապա այն նույնպես գտնում ենք տեխնիկապես հնարավոր, որի համար անհրաժեշտ է՝
- Շենքի գլխավոր ճակատային պատի ժամանակավոր ամրակայումից և մնացած պատերի կազմաքանդելուց հետո, տեղում իրականացնել միաձույլ ե/բ շրջանակային կամ շրջանակակապային կոնստրուկտիվ սխեմայով նոր հիմնականախք, այն հնարավորինս համապատասխանեցնելով շենքի հատակագծային լուծումներին, վերականգնվող պատերի մեջ ներառելով հիմնականախքը(առաջարկվող լուծման 2 տարբերակներ տես կից ներկայացված սխեմատիկ հատակագծերում):
- Առաջարկվող կամ այլ համանման տարբերակների ընտրության դեպքում, առկա վերականգնվող շենքը ողջ ծավալով, ըստ էության կրնոգրկվի նոր կառուցվող շենքի ծավալում և նման ձևով այն կպահպանվի որպես հուշարձան-կառույց:

Շենքի վերակառուցմամբ վերականգնումը պետք է իրականացնել շինարարական աշխատանքների կատարման ու կազմակերպման պլանով և գործող նորմերին համապատասխան մշակված ու սահմանված կարգով համաձայնեցված մախագծով:

Բացման և մաքրման աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր պարագաների դեպքում կկատարվի լրացուցիչ զննում և կտրվեն համապատասխան առաջարկներ ու չուծումներ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:

Մինչև վերակառուցումը սկսելը, օր առաջ անհրաժեշտ է տարհանել բնակիչներին և արգելափակել շենքը, կանխելով մարդկանց ու գույքի գտնվելը տարածքում:

Առաջատար ճարտարագետ:

Շենքերի և կառուցվածքների

սեյսմակայունության փորձագետ՝

Ս. Ա. ՍիմաՎոյան

